ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՍ. ԼՈՒՐԵՐ

ՀՈՒՆԻՍԻ 1-Ը՝ Ս. ԳԱՅԱՆՅԱՆՑ ԿՈՒՅՍԵՐԻ ՏՈՆ

Հունիսի 1-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնահմբեց Ս. Գայանյանց կույսերի տոնը:

Առավոտյան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եկեղեցականների թափորը «Անձինք նվիրյալք» շարականի երգեցողության ներքո ուղղվեց դեպի Սուրբ Գայանե վանք: Տոնի առիթով դուրս էր բերվել նաեւ Մայր Աթոռում պահվող Սուրբ Գայանեի մասունքն ամփոփող Աջը, որը կրում էր Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը:

Վանքում Ս. կույսի Աջը դրվեց ծաղկեզարդ պատվանդանի վրա, որպեսզի բարեպաշտ հավատացյալները հնարավորություն ունենան հպվելու սրբազան մասունքին եւ արժանանալու սրբուհու բարեխոսությանը:

Տոնական այս օրը Ս. Պատարագ մատուցեց Ս. Գայանե վանքի վանահայր Տ. Մակար աբեղա Հակոբյանը: Պատարագի ընթացքում պատարագիչ Հայր Սուրբը նաեւ անդրադարձավ տոնի խորհրդին:

Հավարտ Սուրբ Պատարագի Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիսապետեց Անդաստանի արարողությունը, որի ընթացքում սրբուհու Աջով օրհնեց աշխարհի չորս կողմերը եւ ներկա բազմաթիվ ուխտավորներին:

Ապա գեղարվեստական հայտագրով հանդես եկան Էջմիածնի Հայորդյաց տան սաները:

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունիսի 2-ին համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում իր աշխատանքներն սկսեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների հերթական՝ հինգերորդ հավաքը: Հավաքին մասնակցում են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերում եւ կառույցներում ծառայող շուրջ 85 միաբաններ (աբեղա, վարդապետ, ծայրագույն վարդապետ): Նախորդ հավաքները գումարվել են 1988, 2001, 2003 եւ 2006 թվականներին:

Միաբանական հավաքին ներկա էին Հայ Եկեղեցու Նվիրապետական աթոռների միաբաններ՝ երկու ներկայացուցիչ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից, մեկական ներկայացուցիչ Երուսաղեմի եւ Կ. Պոլսի Հայոց պատրիարքություններից:

Հավաքն սկսվեց կազմակերպչական հանձնախմբի ատենապետ Տ. Կոմիտաս վարդապետ Հովնանյանի բացման խոսքով: Հանուն Նվիրապետական Աթոռների գահակալների միաբանական հավաքի մասնակիցներին ողջունեցին Տ. Սահակ աբեղա Եմիշյանը եւ Տ. Եղիշե վարդապետ Ոչքունյանը:

Ապա միաբաններին հայրապետական իր պատգամն ու օրհնությունը բերեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը խորհրդանշական համարեց այն, որ միաբանական հավաքը տեղի է ունենում նվիրական տոների շնորհաբեր մթնոլորտում: Վեհափառ Հայրապետը նկատեց, որ միաբանների մասնակցությունը Հռիփսիմյանց եւ Գայանյանց տոներին, առաջիկա օրերին նաեւ Ս. Ծողակաթի, Ս. Գրիգոր Լուսավորչի Վիրապից ելնելու եւ Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոներին, առիթ է ընձեռում վերապրելու հայոց ազգային դարձի ակունքներում գտնվող իրադարձությունները եւ այդ վերապրումով նորոգելու ուխտը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ:

«Սուրբ Էջմիածինը մեզ համար ամենանվիրական սրբություններից է, որ անջնջելիորեն դաջված է մեր հոգիներում անկախ նրանից, թե որտեղ ենք գտնվում՝ Հայաստանում, թե Սփյուռքում: Սուրբ Էջմիածինը մեր հոգեւոր ծննդավայրն է, մեր առաքելությունը եւ մեր ուխտը, եւ այս խորհրդի ապրումով հավաքվել ենք այստեղ քննարկելու այն խնդիրներն ու հրամայականները, որոնց առաջ այսօր կանգնած եք յուրաքանչյուրդ իբրեւ հայ հոգեւորական, իբրեւ սպասավոր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, հատկապես, որ ձեզանից շատերը հովվական ծառայության մեջ անմիջականորեն բախվում են ներկայիս խնդիրներին եւ մարտահրավերներին»,-նշեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հրավիրելով միաբաններին իրենց քննարկումներով եւ առաջարկներով նպաստել առկա խնդիրների լուծմանն ու Եկեղեցու առաքելության առավել արդյունավետ իրականացմանը աշխարհասփյուռ հայ ժողովրդի կյանքում:

Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաեւ եկեղեցականի նկարագրին՝ նշելով, որ հոգեւորականի անձնական շահը երբեք չի կարող գերադասվել ազգի եւ Եկեղեցու շահից: Նորին Սրբությունը հորդորեց միաբաններին օրինակելի վարքով եւ հոգեւոր կոչման բարձր գիտակցությամբ շարունակել իրենց նվիրյալ ծառայությունը՝ հավելելով փառքը մեր Սուրբ Եկեղեցու եւ առավել հաստատելով հայ հոգեւորականի բարի համբավը մեր ժողովրդի կյանքում:

Այնուհետեւ, միաբանական 4-րդ հավաքի ատենագրության եւ օրակարգի վավերացումից հետո, սկսվեց համագումարի առաջին նիստը:

Նիստի ընթացքում Գեւորգյան հոգեւոր ճեմարանի փոխտեսուչ Տ. Տիրան աբեղա Պետրոսյանը ներկայացրեց բանախոսություն՝ «Կարգ հիւանդաց»-ին առնչվող ժամանակակից դիտարկումներ» թեմայով: Բանախոսություններով հանդես եկան նաեւ Տ. Վարանդ վարդապետ Քորթմոսյանը («Քրիստոնեական դաստիարակության վիճակը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունում») եւ Տ. Սահակ աբեղա Եմիշյանը («Երիտասարդական առաքելությունը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունում»): Տեղի ունեցավ նաեւ քննարկում «Հայ Եկեղեցու ժամանակակից մարտահրավերները» թեմայով:

Միաբանական հավաքի առաջին օրվա ավարտին Մայր Աթոռի միաբանական գերեզմանատանը կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ Մայր Աթոռի հանգուցյալ միաբանների համար:

Հունիսի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանական հինգերորդ հավաքի մասնակիցները այցելեցին Եռաբլուր՝ հարգանքի տուրք մատուցելու Արցախյան ազատամարտի

հերոսների հիշատակին: Հոգեշնորհ Հայրերը նաև կատարեցին հոգեհանգստյան արարողություն:

Ապա միաբանները մեկնեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, ուր ծաղկեպսակ զետեղելուց հետո նախագահությամբ Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանի աղոթեցին Եղեռնի բյուրավոր նահատակների հոգիների հանգստության համար:

Հունիսի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում միաբանական հավաքը շարունակեց իր աշխատանքները: Ժողովի երկրորդ օրը «Հայ Եկեղեցին եւ գլոբալիզացիան» խորագրով բանախոսությամբ հանդես եկավ Մայր Աթոռի «Էջմիածին» պաշտոնական ամսագրի փոխխմբագիր Տ. Շահե արեղա Անանյանը, ապա տեղի ունեցավ հարցուպատասխան զեկույցում առաջադրված խնդիրների վերաբերյալ:

Նույն օրը Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան արեղա Նավասարդյանը ներկայացրեց «Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի գործունեությունը հայոց կրթօջախներում» խորագրով զեկույցը:

Օրվա ընթացքին քննարկման նյութ դարձան նաև մի շարք ծիսական-հովվական խնդիրներ:

Հունիսի 5-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանական հավաքի մասնակիցները մեկնեցին Խոր Վիրապի վանք, ուր ներկա գտնվեցին Ս. Գրիգոր Լուսավորչի Խոր Վիրապից ելնելու տոնի առիթով մատուցվող Սուրբ Պատարագին: Պատարագիչն էր Խոր Վիրապի վանահայր Տ. Նարեկ արեղա Ավագյանը: Տոնի առիթով Խոր Վիրապ էր բերվել նաեւ Մայր Աթոռում պահվող Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքը:

Նույն օրը Վեհարանում տեղի ունեցավ Մայր Աթոռի միաբանական 5-րդ հավաքի փակման արարողությունը՝ նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Փակման արարողությունը սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո հավաքի արդյունքների մասին ամփոփիչ խոսքով հանդես եկան հավաքի ատենապետ Տ. Կոմիտաս վարդապետ Հովհաննյանը եւ փոխատենապետ Տ. Օշական վարդապետ Գյուլգյուլյանը: Ապա կազմակերպչական հանձնախմբի անդամ Տ. Տաճատ արեղա Ծատուրյանն ընթերցեց հավաքի ատենագրությունը:

Վերջում տարբեր թեմերից Մայր Աթոռում ժողովված միաբան հայրերին իր օրհնությունն ու գնահատանքը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունն իր զոհունակությունը հայտնեց հավաքի կայացման առիթով, որի շնորհիվ միաբանները հնարավորություն ունեցան հավաքվելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ նորոգելու իրենց ուխտը եւ եղբայրական ջերմ մթնոլորտի մեջ միասնաբար արծարծելու Առաքելական Մայր Եկեղեցուն եւ ազգին հուզող խնդիրները: «Մենք կարեւորում ենք նմանատիպ հավաքները՝ իբրեւ միջոց զորացնելու եղբայրական ջերմ հարաբերությունները, քննարկելու եւ լուծումներ առաջարկելու առկա խնդիրների վերաբերյալ», - նշեց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունն առանձնակի ուրախություն հայտնեց նաեւ հավաքին Հայոց Եկեղեցու Նվիրապետական մյուս աթոռների ներկայացուցիչների մասնակցության համար:

Միաբանական հավաքը կատարեց նաեւ միաբանական համագումարի կազմակերպիչ նոր հանձնախմբի ընտրություն, որը եւ վավերացվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից:

Նոր դիվանի կազմում ընդգրկվեցին Տ. Նարեկ վարդապետ Բերբերյանը, Տ. Ներսեհ աբեղա Խալաթյանը, Տ. Մուշեղ աբեղա Բաբայանը, Տ. Ռուբեն աբեղա Զարգարյանը եւ Տ. Մաղաքիա աբեղա Ամիրյանը:

ԱՇԽԱՐՀԻ ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

Հունիսի 2-6-ը Էդինբուրգում տեղի ունեցավ խորհրդաժողով՝ նվիրված Համաշխարհային Միսիոներական Կոնֆերանսի 100-ամյակին: Այս առիթով ամբողջ աշխարհում անցկացվեցին գիտաժողովներ, սեմինարներ ու ծիսակատարություններ:

Խորհրդաժողովին մասնակցում էին ներկայացուցիչներ աշխարհի տարբեր երկրներից եւ Եկեղեցիներից՝ նախագահությամբ Քրիստոնեական Միության Խրախուսման Պապական Խորհրդից եպիսկոպոս Բրայան Ֆարելի եւ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար Դր. Օլավ Թվեիթի: Խորհրդաժողովին Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացնում էր Մեծ Բրիտանիայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Վահան ծայրագույն վարդապետ Հովհաննիսյանը:

Խորհրդաժողովի ընթացքում քննարկվեցին հարցեր քրիստոնեական միության, մարդու ազատության եւ անօրինությունների վերաբերյալ: Առաջարկվեց հաջորդ անգամ մասնակիցներ հրավիրվել հարավային կիսագնդից՝ մասնավորապես կարեւորելով կանանց ու երիտասարդ ներկայացուցիչների մասնակցությունը:

ԳԵՐՇ. Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ ՕԾՈՒՄԸ ԿԱՏԱՐԵՑ ՕՐԼԱՆՏՈՅԻ (ՖԼՈՐԻՏԱ) Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Շաբաթ Յունիս 5 եւ Կիրակի Յունիս 6 օրերը պատմական եւ հոգեկան անխառն ուրախութեան օրեր եղան Օրլանտոյի (Ֆլորիտա) եւ շրջակայքի հաւատացեալներուն համար՝ երբ Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեան Նաւակատիքի արարողութիւնը կատարեց (Շաբաթ օր) եւ օծումը (Կիրակի օր) նորակառոյց Ս. Յարութիւն Եկեղեցւոյ:

Օրլանտոյի ծուխը հաստատուած 1985 թուականի Մայիս 7-ին՝ օրուան առաջնորդ եւ այժմու Երուսաղէմի Առաքելական Աթոռի Պատրիարք Տ. Թորգոմ արք. Մանուկեանի կողմէ: Ծուխի կազմութեան առաջին օրէն աշխատանքներ տարուեցան որպէս զի ծուխը ունենայ իր աղօթքի սեփական տունը: Տարիներու ընթացքին ծուխի անդամներուն թիւը հետզհետէ աճեցաւ, եւ եկեղեցւոյ մը կարիքն ու պահանջքը շատ աւելի զգալի դարձաւ: Շնորհիւ կարգ մը նուիրեալ անձերու աշխոյժ գործունէութեան եւ ժրաջանութեան ի վերջոյ քառորդ դարու երազը իրականութեան վերածուեցաւ եւ 2009 թուականի Սեպտեմբեր 27-ին առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեան կատարեց Օրլանտոյի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ հիմնաքարերու օրհնութիւնը: Եւ ահա մօտաւորապէս ութը ամիս ետք՝ կատարուեցաւ օծումը Ս. Յարութիւն նորակառոյց Եկեղեցւոյ:

ՆԱԻԱԳԱՏԻՔ. Շաբաթ Յունիս 5 (2010) յետ միջօրէի ժամը 6-ին տեղի ունեցաւ նորակառոյց Ս. Յարութիւն եկեղեցւոյ Նաւակատիքի արարողութիւնը՝ հանդիսապետութեամբ թեմական առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեանի՝ իր շուրջը ունենալով Ս. Վարդան Մայր Տաճարի Լուսարարապետ Արժ. Տ. Մարտիրոս Քհնյ. Չեւեան (որ իր խորհուրդներով գնահատելի մասնակցութիւն բերած է եկեղեցւոյ կառուցման աշխատանքներուն), Հալիվուտի (Ֆլորիտա) Ս. Մարիամ Աստուածածին Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վարդան քհնյ. Ջուլֆայեան, Սէյնթ Փիթըրզպըրկի (Ֆլորիտա) Ս. Յակոբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Յովնան քհնյ. Տէմիրճեան եւ Լիվինկսթընի (Նիւ Ճըրզի) Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Շնորհք քհնյ. Սուին: Ներկայ էին նաեւ Միացեալ Նահանգաց Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան տիար Թաթուլ Մարգարեան եւ իր ազնիւ տիկինը, Եկեղեցւոյ գլխաւոր բարերար տիար Հրաչ Թուֆայեան եւ իր ազնիւ տիկինն ու ընտանիքի անդամները, Թեմական Խորհուրդի ատենապետ տիար Օսկըր Թադոսեան, թեմական խորհուրդի փոխ-ատենապետ տոքթ. Ռաֆֆի Յովհաննէսեան եւ ազնիւ տիկինը, առաջնորդարանի զարգացման ծրագիրի համակարգող տոքթ. Սամ Միքայէլեան, ինչպէս նաեւ հաւատացեալներու յոգնախառն բազմութիւն մը:

«Հրաշափառ»ի երգեցողութեանէն ետք՝ «Զողորմութեան դուռն բաց մեզ, Տէր» շարականով բացուեցան նորակառոյց եկեղեցւոյ դռները եւ բոլորը մուտք գործեցին եկեղեցի, ուր տեղի ունեցաւ եկեղեցական արարողութիւն: Ապա, բոլոր ներկաները հրաւիրուեցան եկեղեցւոյ հանդիսարահը, ուր տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ՕԾՈՒՄ ԵՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ. Կիրակի Յունիս 6, առաւօտեան ժամը 10ին՝ «Հրաշափառ»-ի երգեցողութեամբ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեան թափօրով մուտք գործեց Ս. Յարութիւն Եկեղեցի: Սրբազան Հայրը Սրբալոյս Միւռոնով նախ օծումը կատարեց Ս. Խորանին եւ ապա եկեղեցւոյ պատերուն վրայ զետեղուած խաչերուն: Օծուեցան նաեւ մկրտարանը եւ Ս. Խորանի սրբանկարը:

Օծման արարողութենէն ետք՝ Նորին Սրբազնութիւնը խօսեցաւ օրուան խորհուրդին մասին, շնորհակալութիւն յայտնեց ներկայ պաշտօնական հիւրերուն, բարերարներուն եւ նորակառոյց Ս. Յարութիւն եկեղեցւոյ ծիսական խորհուրդի ժրաջան անդամներուն: Ան քարոզին բնաբան ընտրած էր «Էջմիածին» շարականի հետեւեալ տողերը. «Եկայք շինեսցուք սուրբ զիտրանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»: Ան ըսաւ. «Ինչ գեղեցիկ զուգադիպութիւն որ այսօր Հայց. Եկեղեցին կը նշէ Կաթուղիէ Ս. Էջմիածնի տօնը, եւ մեզի համար շատ կարեւոր այս տօնին օրը օծումը կատարուեցաւ նորակառոյց հայկական եկեղեցւոյ մը, որ անուանուեցաւ Ս. Յարութիւն: Այսօրուան տօնը մեզի կը վերյիշեցնէ այն կարեւորագոյն դէպք-հրաշքը որ ամբողջութեամբ փոխեց մեր ժողովուրդին կեանքը: Ս. Գրիգոր Լուսաւորիչի տեսիլքը, երբ Միածին Որդին երկինքէն իջաւ եւ ոսկեայ մուրճով հարուածեց այն վայրը՝ որուն վրայ ապագային կանգնեցաւ քրիստոնէական աշխարհի առաջին եկեղեցին՝ Ս. Էջմիածնի Մայր Տաճարը: Իր տեսիլքէն ետք՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ կոչ ուղղեց բոլորին՝ որպէս զի իրենց մասնակցութիւնը բերեն Մայր Տաճարի կառուցման: Թագաւոր, թագուհի, պալատականներ եւ պարզ ժողովուրդը անսացին այդ կոչին եւ կերտեցին Հայ ժողովուրդի լոյսի խորանը: Անմիջապէս ըսեմ որ «լոյսի խորանը» չի նշանակէր

միայն մարմարեայ եւ քարէ շէնքը, ուր կը տեսնենք սրբանկար, խաչ եւ մոմ, այլ կը նշանակէ գլխաւորաբար քրիստոնեայ մարդը ինքնին: «Լոյսի խորան» կառուցանել կը նշանակէ կերտել մարդ արարածին միտքը, սիրտը եւ հոգին քրիստոսապրիպ նկարագրով՝ որպէս զի մեզմէ ամէն մէկուն կեանք, որպէս հետեւորդները Յիսուս Քրիստոսի եւ զաւակները Հայց. Եկեղեցւոյ, լոյսի տարածման դաշտ մը դառնայ: «Լոյսի խորանի » ճարտարապետը Աստուած ինքն է, սակայն Ան մեզի կարելիութիւնը կու տայ, որպէս զի հետեւելով Ս. Գրիգոր Լուսաւորիչի կոչին, կառուցանենք հազարաւոր քարէ «լոյսի խորաններ» եւ Քրիստոսի օրինակով մեր լուսաւորեալ միտքով, սիրտով եւ հոգիով միշտ փառաբանենք մեր Արարիչը: «Լոյսի խորանը» Քրիստոսի ներկայութիւնն է մեր մէջ. եւ այդ ներկայութեան զօրութիւնն է որ մեզ զրահած է տոկալու եւ պայքարելու չար ուժերուն դէմ, որոնք փորձած են մեզ հեռացնել մեր հաւատքէն, մեր եկեղեցիէն եւ մանաւանդ մեր Քրիստոսէն: Մեր պատմութեան մէջ օրինակները շատ են այս կապակցութեամբ. յիշեմ միայն Վարդանանց պատերազմը, ուր «ոչ հուրը եւ ոչ ալ սուրը» կրցան մեր հաւատքին մէջ մեզ ծունկի բերել: Մօտ ամիս մը առաջ համայն հայ գաղութներուն մէջ ոգեկոչեցինք Մեծ եղեռնի 95-ամեակը. հակառակ անոր որ մէկ ու կէս միլիոնէ աւելի անմեղ զոհեր խլուեցան մեզմէ՝ սակայն մենք «կանգ, պիտի մնանք ու դեռ շատանանք»: Քսաներորդ դարու առաջին ցեղասպանութենէն վերապրողներ ուր որ ալ գացին պահեցին իրենց հաւատքը, ազգային ինքնութիւնն ու այլոց օգտակար հանդիսանալու ազնիւ պատրաստակամութիւնը: Տարիներ առաջ այս հիւրընկալ ափերը բնակութիւն հաստատեցին կարգ մը հայեր, որոնց հետագային միացան ցեղասպանութենէն վերապրողներ: Անոնց առաջնահերթ մտահոգութիւնը եղաւ ունենալ աղօթքի տուներ եւ կրթարաններ՝ որպէս զի ամերիկահայ նոր սերունդին մօտ վառ մնան նախնեաց հաւատքը եւ ազգային ոգին ու ինքնագիտակցութիւնը: Հարիւր քսան տարի եւրք, Ամերիկայի այս ափերուն վրայ ունինք աւելի քան 150 «լուսոյ խորան» եկեղեցիներ, ուր կ'երթանք պաշտելու մեր հաւատքը եւ փառաբանելու մեր Տէրը: Եւ այսօր, ահա Օրլանտոյի այս շրջանին մէջ սրբալոյս Միւռոնով օծեցինք հայկական գեղակերտ եկեղեցի մը եւ զայն կոչեցինք Ս. Յարութիւն, որ կը խորհրդանշէ Հայ ժողովուրդի յաղթական յարութիւնը՝ պատմութեան ընթացքին անոր կրած բազմաթիւ տառապանքներէն, չարչարանքներէն եւ սպանութիւններէն:

. . . Ուրախ ու երջանիկ ենք որ այսօր մեր մէջ կը գտնուի Միացեալ Նահանգներու մօտ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան տիար Թաթուլ Մարգարեանը, իր ազնիւ տիկնոջ հետ: Անոր ներկայութիւնը մենք կ'ընդունինք որպէս մեր ազատ ու անկախ Հայրենիքի ներկայութիւնը մեր մէջ: Այս երեւոյթը լաւագոյն արտայայտութիւնն է Եկեղեցի-պետութիւն ջերմ յարաբերութեան եւ շարունակութիւնը անցեալ դարերէն մեզի հասած սրբազան աւանդութեան: Մեզի հետ են նաեւ Ս. Յարութիւն եկեղեցւոյ գլխաւոր բարերար Տիար Հրաչ Թուֆայեան եւ իր ազնիւ տիկինն ու հարազատները:

. . . Իմ մաղթանքս է որ Օրլանտոյի մեր ծուխը շարունակէ ստանալ նոր կեանքի աստուածային օրհնութիւնները: Եւ թող Սուրբ Յարութիւն եկեղեցին ծառայէ որպէս փոխակերպող ուժը Սուրբ Յարութեան այս համայնքին եւ թեմին մէջ»:

Առաջնորդ Սրբազան Հօր խօսքէն ետք՝ սկիզբ առաւ Ս. Պատարագը: Երգեցողութիւնը ղեկավարեց եւ երգեհոնը նուագեց Ս. Վարդան Մայր Տաճարի դպրաց դասի խմբավար

Խորէն Մէյիանէճեան, երգեցողութեան իր մասնակցութիւնը բերաւ Ս. Վարդան Մայր Տաճարի դպրաց դասի մեներգչուհի Մարօ Փարթամեան:

Նորակառոյց Ս. Յարութիւն եկեղեցւոյ օծման առիթով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Իր Հայրապետական օրհնութեան եւ գնահատանքի գիրին մէջ կ'ըսէր. «. . . Սիրելի՛ հաւատացեալ զաւակներ մեր, գոհաբանական աղօթք է Հայրապետիս շուրթերին, որ Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ բարձրացնում ենք առ Աստուած ձեր հաւատի, աստուածասիրութեան ու ազգասիրութեան, դէպի Եկեղեցի ձեր սիրոյ ու անսուազ նախանձախնդրութեան համար, որոնց շնորհիւ ծնունդ է առել Սուրբ Յարութիւն եկեղեցին: Տակաւին 25 տարիներ առաջ հիմնուած Օրլանտոյի ծուխը, չունենալով իր աղօթատունը, միշտ ապրեց ու անվարան գործեց եկեղեցի կառուցելու նուիրական տեսիլքով: Մեր ժողովրդի զաւակների աղօթքները լսելի եղան Աստծուն, եւ Բարձրեալի օրհնութեամբ եկեղեցու կառուցման աստուածահաճոյ ծրագիրը պսակուեց յաջողութեամբ: Սրբալոյս Միւռոնով օծուած Սուրբ Յարութիւն Եկեղեցին այսուհետեւ իր կամարների ներքոյ պիտի միաւորի ձեզ ու ձեր զաւակներին՝ ծառայելով Քրիստոսի Սուրբ Աւետարանի տարածման, հաւատքի ու ազգային ինքնութեան զօրացման ու պահպանման նուիրական առաքելութեամբ»: Ապա, Նորին Սրբութիւնն Իր գոհունակութիւնն ու գնահատանքը կը յայտնէր թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեանի, Ս. Յարութիւն եկեղեցւոյ բարերարներ Հրաչ եւ Սիւզըն Թուֆայեաններուն, եկեղեցւոյ կառուցումը նախաձեռնող խումբի անդամներուն, նուիրատու եւ աջակից հաւատացեալներուն եւ Օրլանտոյի ու շրջակայքի մէջ բնակութիւն հաստատած աստուածասէր հայերուն:

ՃԱՇԿԵՐՈՅԹ. Յաւարտ Ս. Պատարագի տեղի ունեցաւ ճաշկերոյթ՝ Պուէնա Վիսթա Փալաս Հոթէլի շքեղ սրահին մէջ: Օրուան հանդիսավարն էր տոքթ. Ալպէրթ Էքեան: Բացման խօսքը կատարեց Ս. Յարութիւն Եկեղեցւոյ ծխական խորհուրդի ատենապետ տիար Արամ Նազարեան: Գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր մը, որուն ընթացքին Մարօ Փարթամեան երեք երգեր մեկնաբանեց՝ ընկերակցութեամբ խմբավար Խորէն Մէյիանէճեանի, դաշնամուր նուագեց Սառա Նազարեան եւ վիոլա՝ Սամանթա Ճորճ: Այս առիթով առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեան առաջնորդարանի Ս. Վարդան մրցանակը յանձնեց ծխական խորհուրդի ատենապետ տիար Արամ Նազարեանի: Ելոյթ ունեցան նաեւ դեսպան Թաթուլ Մարգարեան եւ թեմական խորհուրդի ատենապետ տիար Օսկրը Թադոսեան: Փակման խօսքէն առաջ՝ Սրբազան Հայրը իր խորին գնահատանքը յայտնեց ծուխի նուիրեալ անդամուհի տիկ. Լուսին Մարտիրոսեան-Հարվիի, որ Օրլանտոյի ծուխի երազի իրականացման ճամբուն մէջ մեծ եւ գլխաւոր բաժինը ունեցած է: Տարիներ շարունակ իր անխոնջ ջանքերով ու նուիրումով ան առկայծ պահած է սեփական եկեղեցի մը ունենալու գաղափարը, եւ այսօր ամենամեծ հաճոյքով կը վայելէ իր փայփայած երազին իրականացումը: Ապա, Սրբազան Հայրը յայտարարեց որ ի գնահատութիւն տիկ. Մարտիրոսեան-Հարվիի տարած գնահատելի ջանքերուն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. իրեն շնորհած է Հայրապետական Օրհնութեան Գիր եւ «Ս. Ներսէս Շնորհալի» շքանշան: Նորին Սրբութեան Օրհնութեան Գիրը կարդաց Արժ. Տ. Վարդան քհնյ. Ջուլֆայեան իսկ« Ս. Ներսէս Շնորհալի» շքանշանը յանձնեց Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեան:

Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթողիկոսը Իր Օրհնութեան Գիրին մէջ կ'ըսէր. «Լու-

Սուրբ Էջմիածնի կոնը Մայր Տաճարում

սոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ բարեմաղթանքները: Անձնապէս ճանաչում ենք Ձեզ եւ գնահատանքի Մեր խօսքն ենք բերում հաւատաւոր հայութիւն՝ ազգային եւ եկեղեցական մեր կեանքից ներս ծաւալած Ձեր բեղուն գործունէութեան համար: Գոհունակութիւն է Հայրապետիս համար, որ Օրլանդօ քաղաքում բնակեալ հայ համայնքը տարիների ջանադիր ու նուիրեալ աշխատանքի շնորհիւ կառուցեց իր եկեղեցին: Ծուխի ստեղծման ու եկեղեցու կառուցման ակունքներում էք Դուք, սիրելի՛ տիկ. Մարտիրոսեան-Հարվի, որ անսասան հաւատքով տարիներ շարունակ կանգուն պահեցիք համայնքը եւ քաջալերեցիք մեր ժողովրդի զաւակներին՝ զոհողութիւններով ու յանձնառութիւններով յեղափոխուր լինել ապրուածահաճոյ ու եկեղեցաշէն այս իրագործումը: . . .Հոգու խնդութեամբ ենք անդրադառնում նաեւ Հայրենի մեր Երկրի զօրացմանը մասնակցութիւն բերելու Ձեր ազնիւ պատրաստակամութեանը: Բազմաթիւ անգամներ այցելելով Հայաստան՝ Դուք մեծ օգտակարութիւն էք բերել հայրենաբնակ կարիքաւոր մեր զաւակներին, աջակցելով սոցիալական խնդիրների յաղթահարմանը»:

Ծքանշանի յանձնումէն ետք՝ Տիկ. Լուսին Մարտիրոսեան-Հարվի յուզումով շնորհակալութիւն յայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին եւ առաջնորդ Սրբազան Հօր՝ իրեն ընծայուած այս բարձր պատիւին համար եւ խոստացաւ շարունակել իր եկեղեցանուէր աշխատանքները:

Ներկաներուն կողմէ երգուած Տէրունական աղօթքով եւ Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեանի Պահպանիչով իր աւարտին հասաւ Օրլանդոյի ծուխին եւ Ամերիկայի Արեւելեան թեմին համար այս պատմական եւ սրտապնդիչ իրադարձութիւնը:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՈՆ

Հունիսի 6-ին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Սուրբ Էջմիածնի տոնը:

Տոնի առիթով Մայր Աթոռի Միածնաէջ Ս. Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Իսպանիայում եւ Պորտուգալիայում Հայրապետական պատվիրակի փոխանորդ Տ. Սասուն ծայրագոյն վարդապետ Ջմրուխտյանը:

Պատարագի սրբազան արարողությանը մասնակցում էին թեմակալ առաջնորդները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարված միաբանական հինգերորդ հավաքի 85 մասնակիցները, այս առիթով ժամանած բազում ուխտավորներ:

Հավարտ Ս. Պատարագի, Իջման Սուրբ Սեղանի մոտ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց «Էջմիածինը մեր ուխտն է» բնաբանով: «Աստծո Միածին Որդին երկու վայրում է իջել՝ առաջինն Երուսաղեմում էր, երկրորդը՝ այս սրբավայրում, որ հետագայում դարձավ բոլոր հայերի հայրենիքը: Այս տաճարը դարձավ մեր հավատի կենտրոնը:

… Ուստի մենք իբրեւ ժառանգներ խոնարհվենք եւ համբուրենք այս սուրբ վայրը, բարձր պահենք Լուսավորչի գահին նստած մեր գահակալի՝ Վեհափառ Հայրապետի անունը եւ նրան լինենք զորակից, որ ուղեկցի մեզ դեպի ապագա», - նշեց Հայր Սասունը:

Ապա հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի կատարվեց մաղթանք Ս. Էջմիածնի: Ներկաներն աղոթեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառության եւ անսասանության համար:

«ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հունիսի 7-10-ը Շվեցարիայում՝ Բոսեի ինստիտուտում, տեղի ունեցավ Եկեղեցիների Եւրոպական Կոնֆերանսի «Եկեղեցիները երկխոսության մեջ» (ԵԵՄ) հանձնախմբի հանդիպումը, որին ներկա էին հանձնախմբի նորընտիր անդամները՝ նշանակված ԵԵԿ-ի կենտրոնական կոմիտեի կողմից անցյալ դեկտեմբերին: Հանդիպմանը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ներկայացնում էր Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանը:

Հանձնախմբի անդամներն անդրադարձան ԵԵՄ-ի աշխատանքի վերաբերյալ ԵԵԿ կենտրոնական կոմիտեից եւ նախագահական կազմից ստացած որոշումներին, որոնց համաձայն աշխատանքներ կիրականացվեն մինչեւ 2013 թ.:

Հանձնախումբն անդրադարձ կատարեց «Եկեղեցու միությունը» թեմայի հեռանկարներին: Քննարկվեցին նաեւ 2010 թ. հուլիսի 7-10 տեղի ունենալիք Եւրոպայի աստվածաբանական ֆակուլտետների երրորդ խորհրդակցության նախապատրաստման եւ անցկացման հարցեր:

ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Հունիսի 10-ին Գուգարաց թեմի առաջնորդարանում, թեմական առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի նախագահությամբ կայացավ Գուգարաց թեմի հոգեւոր հովիվների հերթական թեմական ժողովը:

Ժողովն սկսվեց «Հայր մեր» տերունական աղոթքով եւ Սրբազան Հոր բարիգալստյան եւ ողջույնի խոսքով: Ապա թեմական առաջնորդը ուրախությամբ հայտնեց, որ թեմի հոգեւորականաց դասը համալրվել է եւս մեկ հովվով՝ ի դեմս Տ. Վիգեն քահանա Ղազարյանի, որ նշանակվել է Ախթալայի Սուրբ Աստվածածին եկեղեցու եւ տարածաշրջանի հոգեւոր հովիվ:

Ժողովին ներկա էին Գուգարաց թեմի Լոռու մարզի թվով 13 քահանա հայրեր:

Ժողովի ընթացքում թեմական առաջնորդը հովիվների ուշադրությանը հանձնեց Վեհափառ Հայրապետի հրահանգով հաստատված «Ուղենիշ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Թեմական Կանոնադրությունը»: Սրբազան Հայրը մանրամասն խոսեց հովվական կյանքում հավատացյալ-եկեղեցի-հովիվ հարաբերությունները կարգավորող կանոնադրության անհրաժեշտության եւ կարեւորության մասին:

Հանձնարարվեց Հաղպատի վանահայր Տ. Ասպետ վարդապետ Բալյանին եւ Ստեփանավանի հոգեւոր հովիվ Տ. Վռամ աբեղա Ղազարյանին Կանոնադրությունը համայնքներում կիրառելու նպատակով բացատրական աշխատանքներով օգնել հոգեւոր հովիվներին եւ համայնքներին:

Ժողովում արծարծվեցին նաեւ հովիվների՝ համայնքներում քարոզչական, կազմակերպչական ծրագրերի իրականացման, ծխական համայնքների ձեւավորման, ամառային բակային ճամբարների գործունեության, հանրակրթական դպրոցներում Հայ Եկեղեցու պատմություն առարկայի դասավանդմանն առնչվող հարցեր:

Ժողովը փակվեց «Պահպանիչ» աղոթքով:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԵԶՐԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑ «ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ» II ԱՍՏԻՃԱՆԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ

Հուլիսի 19-ի երեկոյան ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Ընդունելությունը կայացավ Սանկտ Պետերբուրգի պատմամշակութային կենտրոններից մեկում՝ Տավրիկյան պալատում: Հանդիսությունը ողջույնի խոսքով բացեց Ռուսաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Օլեգ Եսայանը, ելույթ ունեցան Հարավարեւմտյան տարածաշրջանում ՌԴ Նախագահի ներկայացուցիչ Իլյա Կլեբանովը, Նոր-Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը:

Նախագահ Սերժ Սարգսյանը, շնորհավորելով Սանկտ Պետերբուրգի հայ համայնքին հոբելյանի առիթով, կարեւորեց պետերբուրգյան հայ համայնքի ձեռքբերումները իր երեքդարյա գոյության ընթացքում, տեղի հայերի մասնակցությունը Ռուսաստանի պատմության մեջ:

Ընդունելության ժամանակ ՀՀ Նախագահը Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանին պարգեւատրեց ,Հայրենիքին մատուցած ծառայությունների համար II աստիճանի շքանշանով, Սանկտ Պետերբուրգի Հայ ազգային մշակութային ինքնավարության խորհրդի նախագահ Կարեն Մկրտչյանին եւ ՌԴ վաստակավոր արտիստուհի, ,Սանկտ Պետերբուրգի պալատներե միջազգային երաժշտական փառատոնի գեղարվեստական ղեկավար Մարիա Սաֆարյանցին՝ «Մովսես Խորենացի» շքանշաններով:

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ
ՀԱԵ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԵԼ Է ԵՀԽ «ՀԱՎԱՏՔ ԵՒ ԿԱՐԳ» ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԸ

Հունիսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում իր աշխատանքն սկսեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Հավատք եւ կարգ» հանձնախմբի գործադիր վարչության հնգօրյա ժողովը, որ Սուրբ Էջմիածնում է գումարվել հրավերով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Ժողովին մասնակցում են 31

անդամներ Քրիստոնեական տարբեր եկեղեցիներից: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հանձնախմբում ներկայացնում են Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը եւ Տ. Շահե աբեղա Անանյանը:

Ժողովի ընթացքում առանձին աշխատանքային խմբերով քննության կառնվեն «Եկեղեցու առաքելությունը եւ բնույթը», «Եկեղեցական իշխանության աղբյուրները» եւ «Եկեղեցիների բարոյական խնդիրները» նյութերը:

Հանձնախմբի անդամները կայցելեն նաեւ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, կլինեն Խոր Վիրապի վանքում, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, կծանոթանան Հայոց Եկեղեցու կրթադաստիարակչական եւ սոցիալական ծրագրերին:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՄԵԾ ԺՈՂՈՎ ԱՐՑԱԽԻ ԹԵՄՈՒՄ

Հունիսի 23-ին Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմում, ատենապետությամբ թեմական առաջնորդ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանի, տեղի ունեցավ քահանայական մեծ ժողով: Ժողովին, բացի թեմի կուսակրոն եւ ամուսնացյալ քահանաներից, մասնակցում էին նաեւ ԼՂՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի բաժնի պետ Աշոտ Սարգսյանը եւ Արցախի թեմի Տեղեկատվական համակարգի տնօրեն Գարիկ սարկավագ Ասրյանը՝ իբրեւ ատենադպիր:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով: Այնուհետեւ Գերաշնորհ Պարգեւ Սրբազանը ժողովականներին ներկայացրեց նիստին քննարկվելիք հիմնական հարցերը:

Նախ քննության առնվեցին Գանձասարի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու 770-ամյակի տոնակատարությունների ծիրում կայանալիք միջոցառումների եւ անելիքների ծրագրերը: Ըստ այդմ՝ հուլիսի 10-ին Ստեփանակերտում կկայանա հանդիսավոր երեկույթ, հընթացս որի կցուցադրվի Արցախի պետական հեռուստատեսության կողմից Գանձասարի վերաբերյալ նկարահանված ֆիլմ, կհնչեն տարբեր ելույթներ: Երեկույթի վերջում կցուցադրվի նաեւ Արցախի թեմի «Գանձասար» ասպվածաբանական կենտրոնի եւ «Վեմ» ռադիոկայանի տնօրեն Տ. Մեսրոպ քահանա Արամյանի հեղինակած եւ արդեն մեծ արձագանք ստացած «Արարատից Սիոն» ֆիլմը:

Հուլիսի 11–ին՝ Վարդավառի տոնին, Պարգեւ Սրբազանի ձեռամբ Գանձասարում կմատուցվի տոնական հանդիսավոր Ս. Պատարագ: Շուրջ 700 ուխտավորների Գանձասար տանելու համար կտրամադրվեն մեքենաներ: Հավարտ Ս. Պատարագի ուխտավորների համար կկատարվի մատաղօրհնեք, ԼՂՀ Մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարությունը կիրականացնի մշակութային միջոցառումներ:

Տոնի առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից երկու օրով Գանձասար կբերվեն Ս. Հովհաննես Մկրտչի մասունքները:

Սեպտեմբերին նախատեսվում է Արցախում կազմակերպել եռօրյա գիտաժողով, որի նյութերը կհրապարակվեն առանձին գրքով: Հրատարակության են պատրաստվում նաեւ երեք այլ գրքեր:

Այնուհետեւ Արցախի թեմի տեղեկատվական համակարգի տնօրեն Գարիկ սարկավագ

«Հայրապետական կարգ» հանձնումը վեհափառին

«Հավատք և կարգ» հանձնախմբի նիստ

Ասրյանը ժողովականներին ծանուցեց, որ շուտով համացանցում կհայտնվի Գանձասարի մասին կայքէջի հայերեն տարբերակը: Տոնական միջոցառումները պարբերաբար կլուսաբանվեն ՁԼՄ-ներով, ինչպես նաև համացանցում՝ ֆորումների, բլոգների եւ սոցիալական ցանցերի միջոցով:

Պարգեւ Սրբազանը, ընդգծելով այն հանգամանքը, որ Արցախի հոգեւոր-մշակութային կյանքում մեծ կարեւորություն ներկայացնող սույն իրադարձությունը նշվում է Եկեղեցի-պետություն համատեղ բարձր մակարդակով, գոհունակությամբ բարձր գնահատեց այն հսկայական օժանդակությունը, որ ցուցաբերում են ԼՂՀ իշխանությունները:

Այնուհետեւ ժողովականները քննության առան Արցախի թեմում ծխական համայնքների ստեղծման հարցը: Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ընդգծելով հոգեւորականի առաջնահերթ առաքելությունը՝ ավետարանչությունը եւ հավատավոր ժողովրդի հոգեւոր կարիքների բավարարումը, կարեւորեց եկեղեցական համայնքային կյանքի զարգացումը, որն իր արդյունավետությունը կունենա նաեւ աղանդավորության դեմ պայքարում: Որոշվեց հնարավորին չափ կարճ ժամանակում ողջ թեմում ստեղծել ծխական խորհուրդներ եւ եկեղեցական համայնքներ: Հոգեւոր հովիվներն ստացան ծխական խորհուրդի կանոնադրությունը եւ պարտավորվեցին պարբերաբար զեկուցագրեր ներկայացնել թեմական առաջնորդին իրենց հովվական գործունեության վերաբերյալ: Տիար Աշոտ Սարգսյանը, ողջունելի նկատելով նման համայնքների ստեղծումը, հավաստիացրեց, որ պետության կողմից կցուցաբերվի հնարավոր ցանկացած աջակցություն:

Քահանայից ժողովը քննարկեց նաեւ մի շարք այլ կարեւոր խնդիրներ՝ ներքին կազմակերպչական, եկեղեցաշինական, թեմի նյութական ծախսերի, հոգեւորականների զգեստների, եկեղեցական երգչախմբերի կազմավորման վերաբերյալ:

Ժողովը փակվեց «Պահպանիչ» աղոթքով:

ԲԱՐՁՐԱԾՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ՊԷՔՃԵԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԵՑԱԻ ՈՐՊԷՍ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ

Գոհունակ ուրախութեամբ կը տեղեկացնենք, որ 26 եւ 27 Յունիս 2010 թ. Առաջնորդարանիս մէջ ի Քէօլն տեղի ունեցաւ Գերմանիոյ Հայոց Թեմական պատգամաւորական հերթական ժողովը՝ նախագահութեամբ Գերմանիոյ հայոց բարեջան առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Պէքճեանի: Ժողովին ներկայ գտնուեցան գերմանահայոց եկեղեցական համայնքներու ընտրեալ պատգամաւորները, ինչպէս նաեւ հոգեւորականաց դասը, թիւով 39 պատգամաւորներ:

Երկօրեայ նիստերու ընթացքին թեմական-պատգամաւորական ժողովը քննարկեց օրակարգային զանազան հարցեր: Պատգամաւորներուն ներկայացուեցաւ առաջնորդարանի գործունէութեան 2009 թուականի տեղեկագրութիւնը, ինչպէս նաեւ նիւթական հաշուետուութիւնը: ԹՊԺ-ի նիստերու երկօրեայ օրակարգը կը ներառնէր ի մասնաւորի ներքոյիշեալ հարցերը՝ առաջնորդարանի անդամակցութիւնը, թեմիս 2009 թուականի հոգեւոր գործունէութիւնը, առաջնորդարանը եւ գերմանահայ երիտասարդութիւնը, առաջնորդարանի

փոխյարաբերությունները ՀՀ Գերմանիոյ դեսպանության, ինչպէս նաեւ գերմանահայ կարեւոր հասպատությունների հետ, Գերմանիոյ հայոց առաջնորդին հասպատումը՝ պաշտօնավարության յառաջիկայ 7 տարիներու համար ելն:

Ներկայացուած նիւթերու շուրջ տեղի ունեցան բաց, աշխոյժ եւ օգտակար քննարկումներ, յայտնուեցան եւ մշակուեցան զանազան առաջարկութիւններ, որոնք յանձնուեցան թեմական խորհուրդին ապագայ քննարկումներու եւ ի պահանջել հարկին գործադրության համար:

Ժողովը մասնաւոր ուշադրությամբ քննարկեց մանաւանդ հայ երիտասարդ սերունդին հոգեւոր եւ հայեցի դաստիարակության, անոնց առաջնորդարանի անդամակցության, առաջնորդարանիս եւ համայնքներու մէջ անոնց դերակատարության հարցերը: Գոհունակությամբ ընդգծուեցաւ, որ ԹՊԺ-ի երկօրեայ նիստերուն իրենց մասնակցությունը կը բերեն տարբեր համայնքերէ ժամանած երիտասարդ պատգամաւորներ եւ այլ հիւր երիտասարդներ, որոնց առիթ տրուեցաւ արտայայտելու իրենց կարծիքը, տեսակէտն ու սպասելիքները: Ուրախալի էր հաստատել, որ ներկայ երիտասարդները իրենց հաւատարմութիւնն ու սէրը յայտնեցին Հայ Եկեղեցւոյ վերաբերեալ՝ Եկեղեցին նկատելով իրենց ինքնության կարեւորագոյն մէկ մասը:

Բնականօրէն քիչ չէին նաեւ առաջարկներն ու սպասելիքները՝ յուսալով, որ երիտասարդներու ձայնը լսելի պիտի դառնայ, եւ առաջնորդարանը իր կարելին պիտի ընէ ներկայ դարուն համաշխարհայնացման պայմաններու մէջ երիտասարդությունը գրաւելու դէպի Եկեղեցին եւ իր ինքնությունը: Առաջնորդ Սրբազանը ընդգծեց, որ երիտասարդության ներգրաւումը գերմանահայ մշակութային եւ եկեղեցական կեանքէն ներս է եւ կը մնայ, թէ՛ առաջնորդարանին եւ թէ՛ հայկական միւս կազմակերպութիւններու կարեւորագոյն մարտահրաւէրներէն մէկը եւ պատրաստակամություն յայտնեց այս ուղղությամբ շարունակելու առաջնորդարանի համագործակցությունը հայկական բոլոր շահագրգիռ հասպատությունների հետ:

Առաջնորդ Գարեգին Սրբազան եւ թեմական խորհուրդի ատենապետ տոքթ. Սարգիս Քէհեաեան պատգամաւորներուն տեղեկություններ փոխանցեցին անցեալ հոկտեմբեր ամսուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հրաւէրով եւ նախագահությամբ տեղի ունեցած թեմական-ներկայացուցչական ժողովի եւ անոր ընթացքին ընդունուած որոշումներու մասին: Նշուեցաւ, որ Մայր Աթոռին մէջ տեղի ունեցած ժողովին հիմնական նպատակն էր քննարկել եւ Վեհափառ Հայրապետի հասպատման ներկայացնել թեմական նոր կանոնադրության ուղենիշները, որոնց հիման վրայ Հայ Եկեղեցւոյ բոլոր թեմերը, եւ բնականաբար նաեւ Գերմանիոյ հայոց թեմը, յառաջիկայ երկու տարիներու ընթացքին պիտի մշակեն թեմական նոր կանոնադրություններ եւ ներկայացնեն Հայոց Հայրապետի վաւերացման:

ԹՊԺ-ի երկրորդ օրը տեղի ունեցաւ թեմական առաջնորդի հասպատման փակ եւ գաղտնի քուէարկությունը՝ պաշտօնավարության յետագայ եօթը տարիներու համար՝ համաձայն թեմական կանոնադրության դրամադրություններուն:

Քուէարկության մասնակցած 39 պատգամաւորներէն 38-ը իրենց վստահությունը յայտնեցին թեմական առաջնորդին եւ Բարձր. Տ. Գարեգին արքեպս. Պէքճեան վերահաս-

պատուեցաւ առաջնորդական պաշտօնավարութեան յաջորդ ժամանակաշրջանին համար:

Դպրոցամատորներու բուռն ծափահարութիւններու ներքոյ առաջնորդ Սրբազանը յայտնեց իր պատրաստակամութիւնը շարունակելու առաջնորդական իր պաշտօնը եւ հրաւիրեց բոլորին միասնական ու ներդաշնակ ծառայութեամբ լծուիլ աշխատանքի՝ ի սպասաւորութիւն Աստուծոյ եւ ի բարօրութիւն մերազն ժողովուրդի:

Շնորհակալական իր խօսքին մէջ Գարեգին Սրբազան ներկաներուն նաեւ տեղեկացուց, որ ինք Հոգշ. Սերովբէ վարդապետ Իսահանեան յեպայսու պաշտօնապէս կը նշանակէ առաջնորդական փոխանորդ եւ վստահութիւն յայտնեց, որ Հայր Սուրբը, ինչպէս անցած 15 տարիներու ընթացքին, նաեւ յառաջիկային պիտի շարունակէ իր նուիրեալ ծառայութիւնը թեմէն ներս՝ միւս հոգեւորականներու հետ միասին ըլլալով իր գործակիցն ու օգնականը ծառայական ասպուածահաճոյ առաքելութեան մէջ:

Ներկաները գոհունակութեամբ ընդունեցին առաջնորդ Սրբազանի որոշումը եւ ծափահարութիւններով իրենց շնորհաւորութիւնները յայտնեցին նորանշանակ առաջնորդական փոխանորդին: Սերովբէ վարդապետ իր երախտագիտութիւնը յայտնեց Գարեգին Սրբազանին ցուցաբերած վստահութեան եւ գնահատանքի համար եւ հայցեց Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնը՝ իր նոր պատասխանատուութիւնը արդիւնաշատ ձեւով իրագործելու համար:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ԳԵՐՄԱՆԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ «ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՆՈՐԸՆՏԻՐ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Մայիսի 28-ից հունիսի 1-ը Ֆրանսիայի Հանգենյու քաղաքում տեղի ունեցավ Եւրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի «Եկեղեցի եւ հասարակություն» նորընտիր հանձնախմբի անդրանիկ հանդիպումը: Մասնակիցները քննության առան հանձնախմբի 2010-2013 աշխատանքային ծրագիրը, հաստատեցին հանձնախմբի 2011 թ. աշխատանքային հրամայականները:

Անդրադարձ կատարվեց այնպիսի հարցերի, որոնք վերաբերում են Եւրամիության եւ եւրոպական ինստիտուտների միջեւ ընթացող երկխոսության հարցերին, համաշխարհայնացման մարտահրավերներին եւ Եւրամիության 2020 ծրագրերին: Խոսվեց Եւրոպական Եկեղեցիների Կոնֆերանսից ներս տեղի ունեցող զարգացումների եւ վերակազմավորման գործընթացի մասին:

Մասնակիցներն այցելեցին նաեւ Եւրախորհրդարան, հանդիպեցին Եւրախորհրդի Միջմշակութային երկխոսության, կրթության եւ երիտասարդության հարցերով պատասխանատու տիկին Բաթահնի Դրագոնիի հետ, այցելեցին Մարդու Իրավունքների Եւրոպական դատարան, ուր հանդիպեցին Յուրիս Ռուդեֆիսկիսի եւ Ալֆոնսո եւ դե Սալասի հետ:

Հանդիպմանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում էր «Եկեղեցի եւ հասարակություն» հանձնախմբի անդամ Տ. Մեսրոպ աբեղա Պարսամյանը:

ԲԱՑՎԵՑ ՍԵՒԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՌՈՒՍԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԼԻՆԳԱՖՈՆԱՅԻՆ ԼՍԱՐԱՆԸ

Հունիսի 28-ին Սեւանի Վազգենյան դպրանոցում տեղի ունեցավ ռուսերեն լեզվի խորացված ուսուցման՝ Ս. Կիրիլի եւ Մեֆոդիի անվան լինգաֆոնային լսարանի հանդիսավոր բացման արարողությունը: Լսարանը կազմակերպվել է աջակցությամբ Սանկտ Պետերբուրգի Ռուս Ուղղափառ Եկեղեցու Հոգեւոր ակադեմիայի եւ բարերարությամբ ռուսաստանաբնակ Հրաչյա Պողոսյանի:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի Կալվածոց տեսուչ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Մկրտիչ եպիսկոպոս Պոռշյանը, Ս. Պետերբուրգի Հոգեւոր ակադեմիայի տեսուչ Ամբրոսի եպիսկոպոս Գատչինսկին, Մայր Աթոռի միաբաններ, բարերար Հրաչյա Պողոսյանը, Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի ներկայացուցիչներ, դպրանոցի դասախոսներ եւ սաներ:

Լինգաֆոնային լսարանի պաշտոնական բացումից հետո ներկաներին խոսքով դիմեց Սեւանի Վազգենյան դպրանոցի տեսուչ Տ. Գեւորգ աբեղա Սարոյանը: «...Վազգենյան դպրանոցի պատմությունը գիրք չէ, այլ ոգու պատմություն: ...Այս օրը հերթական ոգեկան ձեռքբերումն է մեր քսանամյա փարեգրության մեջ: Այսօր մեր առջեւ որակապես բարձր հոգեւորականներ կերտելու հարց է դրված: Հոգեւորականներ, որոնք իրենց նվիրումով, հավատքով եւ ազգասիրությամբ պիտի նպաստեն մեր քրիստոնեական պետության վերածնունդին: ...Դպրանոցի տեսչությունն անցնող վերջին տարիներին մեծ կարեւորություն է տվել ռուսերենի ուսուցմանը: Դարերի պատմական հիշողություններն են կապում հայ եւ ռուս քրիստոնյա ժողովուրդներին իրար հետ, հոգեւոր եւ մշակութային բազում թելերով: Ռուսաց լեզվի կատարելագործմանը նվիրված լսարանի բացումը դրա լավագույն վկայությունն է»,- նշեց տեսուչը՝ շնորհակալություն հայտնելով Պետերբուրգի հայ համայնքի նախագահ Կարեն Մկրտչյանին՝ դպրանոցի գրադարանն ասպվածաբանական գրականությամբ անընդմեջ հարստացնելու եւ ռուսաց լեզվի դասավանդման համար նախատեսված լավագույն դասագրքեր ապահովելու համար, եւ Պետերբուրգի հայ համայնքից Հրաչյա Պողոսյանին՝ ռուսերեն լեզվի կատարելագործման լսարանը կահավորելու եւ համապատասխան տեխնիկական միջոցներով օժտելու համար:

Հայր Գեւորգն անդրադարձավ նաեւ հոգեւոր կրթական մակարդակում Վազգենյան հոգեւոր դպրանոցի եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու Սանկտ Պետերբուրգի Ուղղափառ հոգեւոր ակադեմիայի միջեւ համագործակցության հաստատմանը:

Ապա ներկաներին դիմեց Սանկտ Պետերբուրգի Հոգեւոր ակադեմիայի տեսուչ Ամբրոսի եպիսկոպոս Գատչինսկին: «Գոհություն եւ փառք Բարձրյալին, որ այսօր առիթ ընձեռվեց ինձ ներկա եւ ուրախակից լինելու Սեւանի Վազգենյան դպրանոցի կյանքում այս կարեւոր իրադարձությանը՝ ռուսերենի խորացված ուսուցման լսարանի բացման հանդիսա-

վոր արարողությանը: Այս իրադարձությունն անշուշտ վկայությունն է մեր երկու ժողովուրդների եւ Եկեղեցիների միջեւ եղբայրական ջերմ մթնոլորտի եւ մասնավորապես մեր երկու կրթական հաստատությունների միջեւ հաստատված համագործակցության, որ տարիների պատմություն ունի, ինչի ապացույցն այն բազմաթիվ հոգեւորականներն են, ովքեր դուրս գալով դպրանոցի այս հարկից՝ իրենց ուսումնառությունը շարունակել են մեզ մոտ եւ այժմ ծառայում են Հայ Եկեղեցու տարբեր թեմերում, ծխերում եւ կառույցներում», - նշեց Ամբրոսի եպիսկոպոսը՝ անդրադառնալով նաեւ դպրանոցի անցյալի դժվարին եւ ներկայիս հիանալի պայմաններին: Ըստ Սրբազանի, լսարանի տեխնիկական հնարավորությունները թույլ կտան, որ սաները լսեն եւ հետեւեն նաեւ Ակադեմիայի ատվածաբանական դասախոսություններին: Նա նաեւ ներկաներին փոխանցեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլի ողջույններն ու շնորհավորանքները:

Ներկաներին իրենց սրտի խոսքը փոխանցեցին Սանկտ Պետերբուրգի տարածքային ազգային մշակութային ինքնավարության նախագահ Կարեն Մկրտչյանը եւ լսարանի բարերար Հրաչյա Պողոսյանը: Ապա գեղարվեստական կատարումներով հանդես եկավ դպրանոցի երգչախումբը:

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունիսի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, տեղի ունեցավ վարդապետական թեզերի բանավոր պաշտպանություն:

Մասնավոր վարդապետության աստիճանի համար թեզեր էին ներկայացրել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ Տ. Մատթեոս աբեղա Պողոսյանը («Հովասափ Սեբաստացու ստեղծագործությունները»), Տ. Ներսեհ աբեղա Խալաթյանը՝ «Սուրբ Գայանե վանքը (պատմակրոնագիտական ուսումնասիրություն 301-2006 թթ.»), Տ. Մուշեղ աբեղա Բաբայանը («Սուրբ Գրիգոր Նարեկացու կրոնաբարոյական հայացքներն ըստ «Մատյան ողբերգության» ստեղծագործության» եւ Տ. Իսահակ աբեղա Պողոսյանը («Վարագա Սուրբ Նշանը եւ վանքը հայ մատենագրության մեջ»):

Հանձնաժողովը, որի կազմում էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանն իբրեւ նախագահ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը եւ Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Մկրտիչ եպիսկոպոս Պոռշյանը, քննելով ներկայացված թեզերը, արտոնել էր բանավոր պաշտպանության:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ առաջիկային տեղի կունենա հոգեշնորհ հայրերի՝ մասնավոր վարդապետության աստիճանի տվչության արարողությունը:

ՕԾՎԵՑ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԲՈՒԴՅՈՆՈՎՍԿ ՔԱՂԱՔԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Սույն թվականի հունիսի 30-ին, ձեռամբ Հարավային Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Մովսես եպիսկոպոս Մովսիսյանի եւ մասնակցությամբ թեմի հոգեւոր դասի, օծվեց Բուդյոնովսկ քաղաքի Սուրբ Հարություն եկեղեցին:

Բուդյոնովսկ քաղաքը 1799 թվականին հիմնադրվել է հայերի կողմից եւ անվանվել Սուրբ Խաչ, սակայն խորհրդային տարիներին քաղաքը վերանվանվել է Բուդյոնովսկ: Ժամանակին քաղաքում գործել է երեք հայկական եկեղեցի, որոնցից երկուսը խորհրդային տարիներին փլվել է, իսկ մեկը՝ Սուրբ Խաչ մատուռը, պահպանվել է մինչեւ մեր օրերը: Հինգ տարի առաջ թեմի առաջնորդ Մովսես սրբազանի օրհնությամբ դրվեց եկեղեցու հիմքը եւ հոգեւոր հովիվ Տ. Արսեն քահանա Բուդաղյանի ղեկավարությամբ ու տեղի հայ համայնքի ազնիվ հայորդիների նյութական աջակցությամբ ավարտին հասցվեց շինարարությունը:

Այդ օրը մարդաշատ էր եկեղեցու բակը, ավելի քան 12 հազար հայ բնակչություն ունեցող քաղաքի հավատացյալների հոծ բազմությունն ուրախության եւ ցնծության մեջ էր: Բուդյոնովսկ էին ժամանել ուխտավորներ նաեւ տարածաշրջանի քաղաքներից, հայկական հասարակական կազմակերպություններից եւ եկեղեցական համայնքներից:

Հավարտ Սուրբ Հարություն եկեղեցու օծման առաջնորդ Հայրն իր պատգամը հղեց հավատավոր հայ զավակներին: Նա կարեւորեց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերն ու նշանակությունը հայության կյանքում, բարձր գնահատեց եկեղեցու շինարարությանը նյութապես օժանդակած բարերարներին եւ շնորհավորեց բոլորին օրվա գեղեցիկ տոնի վերածված արարողության առիթով:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ